

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ *).

1827-ին Գաղղիոյ Կառավարութեան տնօրէնութեամբ Պրօֆեսսոր Շուլցը Հայաստան գնաց — տեղւոյ հնութիւնքն հետազոտութեանց առնելոյ, յատկապէս Վան քաղաքի մէջ՝ որ համանուն լճի եզերքումն է գտանուում: Այս Պրօֆեսսորը յաջող գործունէութեամբ ինչպէս Վան քաղաքի մէջ՝ նոյն և համանուն լճի շրջակայքում շատ սեպագրութիւններ գտաւ, զորս մեծ խնամքով օրինակելուց և որոց վերայ կարևոր ծանօթութիւնք ևս յաւելացնելուց յետոյ՝ Գաղղիոյ Կառավարութեան ուղարկեց: Ափսոս որ վերոյիշեալ Պրօֆեսսորը իւր ուսումնական հետազոտութեան արգասիքն ինքն ի լոյս ընծայել չկարողացաւ, թույլ մնալով Քրիստոսի պետի դաւաճան սպանութեան զոհուելով: Նորա օրինակած գրութիւնքը որ թուով քառասուն երկու հատ են, Ասիական ընկերութեան օրագրի 1840 թ. 52 համարումն տպուած: Գրեթէ այդ իսկ ժամանակն էր որ Բերլինի Աշխարհագրական ընկերութեան գործունէութեան մասին հրատարակուած ամսական տեղեկութեանց մէջ Աշխարհ 1840 թ., միբևեռաձև արձանագրութեան օրինակը հրատարակուեցաւ: Այդ արձանագրութիւնը երկրաչափ Միւլլախն էր գտել Մալթայի մերձակայքում՝ Եփրատայ վերին մասերի

մօտ, դոքա ևս վերոյիշեալների տեսակիցն էին:

Չկարծեմ թէ բևեռաձև նշանագրոց զանազան տեսակները բոլորին ընդհանրապէս ծանօթ լինին, ապա ուրեմն կվստահիմ համառօտ ծանօթութեամբք նիւթըս աւելի դիւրահասկանալի առնել:

Սեպագիրը կամ բևեռագիրը, որ այսպէս անուն է ստացել, որովհետև յատկապէս պարզ և կրկնակի այս ինքն անկիւնաչափի ձև ունեցող սեպերից կամ բևեռներից է բաղկանում, բաժանուում է երկու գլխաւոր տեսակի՝ ալիսիւն և առալիսիւն: Առաջին տեսակի՝ որն աւելի հասարակն է, կարգալու գլխաւոր կանոնները գրեթէ 70 տարի առաջ արդէն պարզաբաներ է հանգուցեալ Գրօգրֆենդի ուսումնականը, և որովհետև սորա աշխատութիւնքը վերջերումս Ռասսի, Բիորնուֆի, Ժաքէի, Բէհրի, Լասսենի, Ռալլինսոնի, Բէնլֆի և Շպեդի ջանիւք շատ կատարելագործեցան, վասն որոյ այդ բաժինը վերջացած համարել կարելի է: Արձանագրութեանց այս տեսակի լեզուն Սանսկրիտ և Չինդ լեզուներին ազգակից է ընդունուել, որ Պարսկական դիւանական լեզուն էր Աքեմենիդաց օրօք:

Երկրորդ տեսակն՝ այն է առալիսիւնը, աւելի բաղադրեալ է և շատ զանազան ճիւղեր ունի, ինչպէս Ն. Սիլվաիական կամ Սուզիականը, որոյ 110-ից մինչև 120 նշանագրերով գրուած արձանագրութեանց լեզուն իւր կազմուածքի վերաբերութեամբ իբրև հին Թուրքականն է ընդունուում, չնայելով որ շատ անարիական տարրեր է բովանդակում իւր մէջ. սա երևի թէ հին Սուզիականի լեզուն է

Այս յօդուածը Աուգուստին «Հանրական լրագրի», 1871 թուի դեկտեմբերի 21, 22, 23, 24 համարների յաւելուածումն է տպուած. սորա ստորագրութիւնն է Դոկտոր Ա. Դ. Մորգանի, ի Պոլս. 1871, նոյեմբեր:

եղած . Բ՝ Ասորական — Բաբելական , որ շատ խառն ու շփոթուած է , 600 ից մինչև 700 նշանագիրք է պարունակում իւր մէջ և Սեմական լեզու ունի : Այս ձիւղին է պատկանում Բաբելոնի ու Նինուէի բոլոր արձանագրութիւնքը . այն չնչին զանազանութիւնքը , որ Նինուէական և աւելի նորագոյն Բաբելական արձանագրութեանց մէջ են գտանվում , քննութեան չեն ենթարկուում այս տեղ : Չ՝ Հայկականը , սորա Հայկական կոչուելու պատճառն այն է՝ որ միայն Հայաստանի սահմաններում գտնուած բեկեռաձև արձանագրութեանց մէջ է գործածուած . այս ձիւղը 120 ից մինչև 130 նշաններ ունի . լեզուն մինչև ցայսօր տակաւին անծանօթ է մնացեր :

Այս անարիական տեսակը դարձեալ շատ ձիւղեր ունի , որոնք մեր նիւթի վերաբերութեամբ նշանակութիւն չունին : Բայց սոցա բոլորեցունց միմեանց նման լինելու և իրապէս արիական կամ Պերսեպոլիտական տեսակէն զանազանուելու այն է միմիայն պատճառ , որ սոքա բազմութիւնը նդհանուր նշաններէ զատ , ունին այլ ևս տեսակ մի նշանագիրք՝ զորս զիտնականք բացայայտիչ և գաղափարադիր կկոչեն : Առջինքն՝ այն է բացայայտիչքը՝ քանի մի որոշեալ բառերի առջև են դրուում նոցա իմաստը յառաջագոյն ցուցանելու աղազաւ . զօր . ուղղաձիգ պարզ բեկու մի՝ արիական յատուկ անուն մի կնշանակէ , միւսները աստուածներ , իգական անձինք , աշխարհներ , դետեր , քաղաքներ , կենդանիք , բուսական կամ հանքային առարկայք և այլ այսպիսի իրեր կորոշեն : Ներկորդքն՝ այն է գաղափարադիրքը ընդհակառակն ,

մի եղակի խմբի միջոցաւ որոշեալ գաղափարներ են յայտնում . զօր . թագաւոր , երկիր , քաղաք , ծով , ոչխար , եղ և ըն : Այս բոլոր բացայայտիչքն և գաղափարադիրքը վերոյիշեալ երեք ձիւղերուն ևս ընդհանուր են , այս ինքն մի և նոյն նշանը որ մէկ ձիւղի մէջ « ոչխար , » բառը կը նշանակէ , միւս ձիւղերուն մէջ ևս նոյն իսկ գաղափարը կորոշէ : Սեր Նւրուպական լեզուաց մէջ ևս նմանութիւն կայ , մեր թըւոց նշանները գաղափարադիր են . եթէ մէկը դըրքի մէջ Է թուանշանը տեսնէ , Վաղդիացին « քար , » կկարդայ , Վերմանացին « ֆիր , » Անգղիացին « » , և ըն . բայց ամենքն ևս միեւնոյն ժամանակում մի և նոյն թիւն են մտածում՝ այն է Է թիւը : Նթէ յիշեալ նշանագրի մօտ տեսնուի 16 նշանն ևս , Վերմանացին . . . կը կարդայ , Անգղիացին պահար , բայց մի ձիւղ հետախուզութիւն ևս մեզ կուսուցանէ թէ այդ նշանագիրը երկու տառերից այս ինքն L ից B ից բարդուած է , ուրեմն իսկապէս libra (լիբրայ) livre (լիվր) պէտք է կարդալ , որից իսկոյն յայտնուում է թէ Նւրուպիայի որ կողմերից է գտել այդ գաղափարադիրը իւր ծագումը : Հիւսիսային արեւմտեան Վերմանիայում , որ տեղ գերմանական տէրութեան համար առաջարկուած դրամական չափը , մարկը , արդէն դարերով գործադրուած էր , կայ մի գաղափարադիր՝ որ ոչ այլ ինչ՝ բայց միայն Հիւսիսային Վերմանական արագագրութեան J տառը , որն իրեն փիւնիկական գաղափարին աւելի մօտ է քանց մեր K տառին , այս է Մարկ (Mark) բառիս վերջին տառը : Անարիական տեսակի այն երկու առաջին ձիւղերի օգնութեամբ , որի մէջ լի-

գուադէտներն արդէն իրար հետ յարաբերութիւններ ունենալով բարւոյց յառաջողութեամբ ցոյց տուած են, կարելի եղաւ այնուհետեւ դեռ բաւական կանուխ այս Հայկական սեպագրութիւնքն ևս կարգաւ ու բացայայտիչներէ և գաղափարագիրներէ միջնորդութեամբ մինչև անգամ հատ հատ անուններ ևս դուրս բերել միջից: Բայց սորանով և վերջացաւ ամեն բան. միայն թէ շատ շուտով խոստովանելի եղաւ, որ այս տեղ մի նոր բոլորովին անծանօթ լեզուի հետ գործ ունէին և այս պատճառով բովանդակութիւնը մնաց անբացատրելի:

Այն ստեպ աչքի ընկնող զարմանալի սերտութիւնը նայելով, որով Արեւելքը ամուր պահպանում է իր հին անունները, ցանկալի էր ինձ Անկուրատային կամ Աւրայի տեղն ընդունել կամ Աարիտէյնի, երկուսն էլ Պայմիրայի և Վամասկոսի մէջ տեղ զտնուող ծանապարհի վերայ են. Աարիտէյնը այնու ամենայնիւ շատ հին տեղ է. Բէլադորին պատմում է իր աշխարհակալութեանց անունով գրքի մէջ, եր. 112. (ed. de Joëje; Luyduu 1866), թէ Խաւիդը որ Բարեւոնից դէպ ի Հեռնիրիա խաղալու ժամանակ այս տեղիցն է անցել, թէ այդ տեղն ուրեմն Խաւամի ժամանակներէց արդէն կար: Եւ գտայ այն տեղ նրմանապէս հին գրութիւններ մի այնպիսի ժամանակից մնացած, երբ այն տեղ դեռ քրիստոնէութեան մէջ չկար: Աւրայի մէջ չգտայ ես ոչ մի հին յիշատակարան, բայց տեղը այնու ամենայնիւ մի շատ հին տեղ է և ես մի քանի ուրիշ պատճառներից կարծում եմ որ մեր արձանագրութեան միջին Անկուրատացին այժմու Աարիտէյն է:

Այնու ամենայնիւ երկու զիտնականք քանի մի տեղեկութիւնք հանեցին այս անմատչելի նիւթէն: Աւաղուց արդէն Ուալլինսօնը ընդունեց (խոստովանեց) որ այս արձանագրութիւնքը հին Մսորեստանի թագաւորութեան կործանման և Վրեմենիդաց տէրութեան հիմնուելու ժամանակամիջոցին են վերաբերում, ուրեմն մերձաւորապէս 750-ից մինչև 550 թուականը նախ քան Վրիստոսի ծնունդը. նրմանապէս նա ընդունեց որ այդ արձանագրութիւնքը այն հինգ զանազան միապետներին են վերագրուելու որոնք ժառանգաբար յաջորդեցին միմեանց:

Այս արձանագրութեանց մեծ և ուշադիր աշխատանք է նուիրել հանգուցեալ Լոգուարդ Հինքսը, որոց արդիւնքը 1847 թուին Վեկտեմբերի 14-ին մատուցել է Մեծին Բրիտանիոյ և Իռլանտիոյ «Մտիական ընկերութեան», և թէև այս զիտնականը չկարողացաւ գտնել արձանագրութեանց ամբողջ իմաստը, սակայն հետեւեալ կետերի պարզաբանութեան նկատմամբ դարձեալ անժխտելի է նորա երախտիքը, որ Ուալլինսօնին համաձայն այն ժամանակը և այն միամիտները՝ որոնց պատկանում են այս արձանագրութիւնքը, ճշդիւ որոշեց. Բ՝ որ կարեւորագոյն արձանագրութեանց մէկի ծիշդ իմաստը պարզօրէն բացատրեց. Գ՝ որ արձանագրութեանց մէջ գործածուած թուարկութեան ծիշդ մեկնութիւնը ընծայեց. և Դ՝ որ արձանագրութեան լեզուի արիական արմատին պատկանելը անհերքելի կերպիւ ապացուցեց: Վերոյիշեալ զիտնականի այս ամենայն և բաց ի սոցանից փոքր նշանակութիւն ունեցող ուրիշ իրերը հասկանալու նպաս-

տիչ միջոցը երկու միայն բառից ծանօթութիւնն էր, այն է ապա կամ ապա՛ որ կրնշանակէ նա կիսուէ, :

Հինքսի այս աշխատութենէն ետքը, որ վերոյիշեալ ընկերութեան 1848 թուի օրագրումն տպագրուեց, ուրիշ փորձ յայտնի չէ ինձ, որ յիշեալ արձանագրութեան լուծման կամ մեկնութեան համար ի դորձ դրուած լինի, այն ինչ այս ժամանակամիջոցին պատրաստի եղած արձանագրութեանց թիւը աւելցաւ:

1. այսպէս Լ. փրատի վերին մասերում, Բալուի մէջ արձանագրութիւն մի օրինակել է, որ 1851 ին հրատարակեց 1. ռոդունում: (Պաճառորդ ձեմարանական) Ղեմարանի անգամ Վեսաները Ուուսիոյ Հայաստանում երկու արձանագրութիւն էր օրինակել, զորս 1865 թուին Պետերբուրգի ձեմարանը ի լոյս բնծայեց:

2. Վերսէս Սարգսեանը 1864 թուին Վենետիկում Մեծ և Փոքր Հայաստանի ստորագրութիւնը տպագրեց, յորում վեց օրինակած արձանագիր կը գտնուի:

1. ջմիածնի՝ Երարատ, ամսագրի, 1869 թուի Հոկտեմբեր, Նոյեմբեր—տետրակաց 138 երեսում, 1870 թուի Փետրվարի—տետրակի 248 երեսում և 1870 Սեպտեմբերի—տետրակի 175 երեսում երեք ուրիշ արձանագրութիւնք հրատարակուեցան, զորս 2. Սեպրովը Վարդապետ Սմբատեանն է գտեր Երմաւրում և Յօլակերում:

Տըթթու Ղէ Ռօբեռտ Խտալական աշխարհագրական ընկերութեանը երկու արձանագրութիւնք ուղարկեց, զորս հրատարակեց ընկերութիւնը իւր 1870 թուի Օրագրումը:

Վերջապէս քանի մի արձանագրութիւնք ևս, զորս իմ Հայաստանում եղած բարեկամներէս եմ ստացեր և դեռ տպագրուած չեն:

Այս նոր արձանագրութիւն շատերը, իսկրգբան Շուլցն էր օրինակեր, բայց մէկի միւսի հետ համեմատութիւնից մեծ օգուտներ կարելի է քաղել: Շուլցի օրինակած արձանագրութիւններէն երեքը Վսերքսիս թագաւորին են վերաբերում, զորս հարկաւոր է ի բաց հանել վերոյիշեալ 40 հատ արձանագրութիւններէն: Այժմ ինձ մօտ գտնուած նիւթը 50 հատ արձանագրութիւններից է բաղկանում:

Հատ հաւանական է որ այս արձանագրութեանց լեզուն զրաբառ է այսինքն նախնի Հայկականը, բայց և մեծ համարձակութիւն կ'ընէր, եթէ այդ ենթադրութեան վերայ միայն հիմնուելով՝ վըստահութիւն առնուինք բնագիրը Հայկական լեզուաւ մեկնել. սակայն մի մօտալուտ քննութեան շնորհիւ քանի մի բառեր ձանաչեցի շատ շուտով և կատարեալ վըստահութեամբ, յորս բացայայտիչքը ևս զործոյս մեծ դիւրութիւն կ'ընծայէին, նա մանաւանդ որ բոլոր կարգացած բառերն ևս գտանուում են Հայկականին մէջ, և ի հարկէ այսպիսի փոփոխութեանց ենթարկուած, որպիսեաց ենթարկուում է և ամենայն լեզու յընթացս քանի մի հազար ամ ժամանակի: Եւ այսպէս առանց իւրիք երկրայութեան Հայոց լեզուի օգնականութեամբ նոյն և բացայայտիչներու, զաղափարագրերու և ուրիշ այլ իրերաց միջնորդութեամբ կարողացայ բոլոր արձանագրութեանց ղլխաւոր իմաստը հասկանալ և մեկնել: Այս մեկնութեան ղլխական

պատճառարանութիւնը և արձանագրութեանց լեզուադիտական մեկնութիւնը յօդուածի մի մէջ ամփոփեցի, որ «Պետական արեւելեան ընկերութեան», վարչութեան ձեռքն կդտնուի այժմ*):

Համառօտակի կշիշեմ այս տեղ միայն այդ քննութեանց արդիւնքի վերայ:

Ժամանակի որոշման վերաբերեալ հարցը հետեւեալ հանգամանքից է պարզուում, որ կարգով ժառանգող թագաւորներին չորրորդը՝ իրեն Ասորեստանեայց զէմ արած արշաւանքներն է նկարագրում. նա Արզրում էր այն ժամանակում երբ Ասորեստանեայց երկրորդ թագաւորութիւնը դեռ կար, այն ինչ նորա որդին և յաջորդը՝ որ հինգերորդ թագաւորն էր, իւր Բաբելոնի զէմ արած արշաւանքն է նկարագրում, ապա ուրեմն ականերև է որ այդ միջոցին վերջացած պէտք է լինի Ասորեստանեայց թագաւորութիւնը, եթէ ոչ Հայաստանի և Բաբելոնի մէջ պատերազմ լինել չէր կարող: Բայց որովհետև Ասորեստանի տէրութիւնը Քրիստոսից 600 տարի յառաջ վերջացաւ և Վինուէն Բաբելոնեան տէրութեանը հետ միացաւ, ապա ուրեմն առանց մեծ սխալանք մի անելու՝ այդ թիւը կարող եմք իբրև դարադրուի ընդունել. այդ ժամանակն էր որ մեր կարգի չորրորդ թագաւորը վաղձանեցաւ և որոյ որդին իբրեն յաջորդեց: Եթէ առաջին չորս թագաւորաց իւրաքանչիւրի համար 25 տարի հաշուեմք, մերձաւորապէս 700 տարի

քրիստոսից առաջ կուգամք այն ժամանակակէտին, ուրեմն երբ Տիւ Պարպիլասար, Սարգինեան և Սենեքերիմ արշաւանքներ բացին դէպ ի հարաւ Բաբելոնի և դէպ ի հարաւային արեւմուտք Ասորեոց աշխարհի, Փիւնիկիի և Պաղեստինու վերայ:

Այն տէրութիւնը, որոյ իշխանները մեր արձանագրութեանց մէջ յիշուած թագաւորներն էին՝ Պիամայ կոչուի, այս անունը Հայաստանի աշխարհացուցի վերայ չի գտնուում: Ընդհակառակն նոյն արձանագրութեանց մէջ ուրիշ բաղմաթիւ անուններ ենք գտնում, որոնք ոչ միայն միջնագարեան՝ այլ և այժմեան աշխարհացուցի վերայ ևս կգտնուին:

Այդ աշխարհի մայրաքաղաքը Տոպա անունը կկրէր, ինչպէս որ ըստ Մովսիսի Խորենացւոյ (Պիւրք Պ. ԳԼ. 35) վանքաղաքը Տոպա, ըստ Պտղոմէոսի վանայ ծովը Թոպա և քաղաքը Թոպա անունները կկրէին (Նշխարհագր. Պտղոմ. Ե. 13. Յօդ. 7—19):

Արձանագրութեան մէջ յիշուած առաջին թագաւորը Բագրիտուր Ա, Լուտիբրի որդին, որոյ տիտղոսը, ինչպէս և Ասորեստանեայց բոլոր միապետներունը, հետեւեալն էր, «Արքայ արքայից, մեծն արքայ, արքայ մեծամեծ զօրաց, բայց թագաւորութիւնը Պիամայ անունը չէր կրում դեռ ևս, այլ Մայրի, որ անտարակոյս Մեդաց աշխարհք՝ Հայերէն Մար անուան նման է, և այդ անուան այդ տեղ յիշուելուն երևի այն է պատճառ՝ որ Ասորեստանեայց իշխանութեան ժամանակ Հայաստանը կամ գոնէ նորա արեւելեան մասը Մեդաց աշխարհով հանդերձ Ասորեստանի մէկ նահանգն էր կազ-

(*) Յիշեալ յօդուածը՝ որ մեր ուսումնասիրաց գնահատութեան արժանի է, ցաւօք սրտի կհաղորդեմք որ դեռ ընդ տեսած չէ, վասն որոյ և աստ անյիշատակ:

մում: Իսպորիտուր առաջին թագաւորին պատկանեալ մի միակ արձանագրութենէն զատ, ուրիշ տեղեկութիւն չունիմք, վասն զի կցկաւուր և նոյն ինքեան Շուլցի խոստովանութեամբը գուցէ և սխալ օրինակած լինի:

Նորան յաջորդեց իւր Իսպուրնիս որդին, որ երեւում է թէ շատ երկարատե թագաւորութիւն է ունեցեր. բայց սորան էլ միայն երկու արձանագրութիւն է նուիրած. հնագոյնը ամրոցի մի շինութեան վերայ կիսօխ. երկրորդը շատ նշանաւոր է և ինքսի նկատմամբ պատմագրական և ազգագրական կողմանէ հին արձանագրութեանց մէջ ամենանշանաւորն և հետաքրքրականն է. բայց յայտնի է շատ դիւրահասկանալի և կրկնակի է գրուած, այս ինքն երկու անգամ է փորուած բնագիրը, նախ 31 տողով, յետոյ 63, այնպէս որ երկու գրութեանց աղաւաղեալ կտորները փոխադարձն են լրացնում: Իսկ թէ լեզուագէտ մի մինչև ցարփ յտնձնառու չեղաւ այս վերին աստիճան նշանաւոր արձանը քննելու, ինչ բոլորովին անհասկանալի է: Իսպուրնիսն և իւր Մինուաս որդին միշտ միասին են անուանուում այս արձանագրութեան մէջ, ուստի շատ հաւանական է որ Իսպուրնիսն իւր ծերութեան պատճառաւ Մինուաս որդին իրեն թագակից է ընդուներ: Աւ ինչպէս վերը յիշեցինք, Իսպուրնիսի երկարատե թագաւորութիւնը երեւում է ուղղակի իրեն պատկանեալ երկու արձանագրութիւններէն. այս արձանագրութիւնը թէ լեզուաւ և թէ նշանագրութեամբ այնպիսի փոփոխութիւնը են ցուցանում, որոնք սովորաբար երկար ժամանակեայ միջոցում

միայն կարող են երեւան գալ: Իսպուրնիս և նորա որդին Մինուաս յիշում են այս արձանագրութեանց մէջ, որ իրենք իւրեանց երկրի բոլոր աստուածոց զոհ են մատուցեր. յիշատակուած է այս տեղ նոյնպէս և իւրաքանչիւր աստուծոյ անունը առանձին, աստուածոց մատուցած զոհերը՝ որոնք առհասարակ եզերից և ոչխարներից էին բաղկանում և մէկ անգամ միայն ուղտերից, նոյն և այդ զոհերի որքանութիւնը: Այլ թսունից աւելի զանազան աստուածներ իրենց մատուցուած զոհերի որքանութեան կարգաւ են յիշատակուում այս տեղ: Աւ երջին ժամանակները այդ անուանց մեծագոյն մասը Հայոց և Պարսից պատմութեանց մէջ շատ յաճախ իբրեւ յատուկ անուն է ընդունուեր: Այս արձանագրութեան մասին դարձեալ կիսօսեմք վերջը:

Արձանագրութեանց մեծագոյն մասը Մինուաս թագաւորին է պատկանում. թուի թէ սա ևս՝ ինչպէս իւր հայրը՝ երկարատե թագաւորութիւն է ունեցեր: Աւ երոյիշեալ արձանագրութեանց մեծ մասը Մինուասի մեծագործութեանց են վերաբերում, որ ի հարկէ մինչև ի կատար հասուցանելն երկարատե ժամանակի կարօտութիւն կղզացուէր: Այս մեծագործութեանց կարգն են անցնում զօ. կառավարչական շինութիւնները, իւրաքանչիւր աստուծոյ համար առանձին բաղիններ, մի արգելանոց, Աւ նապ ծովի մօտ՝ մի արքունի ճանապարհ, ուր գուցէ մինչև ծովի ափը տարածուած ապառաժները ճանապարհը արգելում էին ևլն: Արձանագրութեանց մէջ յիշատակութիւն կայ նոյնպէս Մինուասի պատերազմական ձեռնարկու-

Թեանց մասին. այդ տեղ յիշուած քաղաքներէն և աշխարհներէն կերևի թէ արշաւանքի ուղղութիւնը Աւանայ ծովի հարաւային ափերով դէպ ի հարաւային արեւմուտք է եղած. ցաւալի է միայն որ արձանագրութեան աղաւաղելի վեճակը թոյլ չէ տալիս մասնաւոր հանգամանքները վստահութեամբ որոշել: Սակայն Բաւլուի մէջ Այարզի գտած արձանագրութիւնք յիշատակութիւն ունին Մինուասի մինչև Ափրատ գետոյ վերին մասերն արած արշաւանաց մասին, որոյ նպատակը Խատիւա և Բուդիրա աշխարհներն էին զլիաւորապէս. հաւանական է որ դոցանից առաջինը Խոյն է, որ Աւանայ ծովի արեւմտակողմն է ընկնում, իսկ երկրորդը Բուդիրա նահանգն է իւր Խուզամայ մայրաքաղաքով, որոյ նմանը չկարողացայ գտնել և ոչ մի տեղ. սակայն հարկաւոր է Բաւլուի մերձակայքումը փնտռել: Մինուասը այս արձանագրութեանց մէջ յիշատակում է նոյնպէս որ իւր արշաւանաց ժամանակ քսան քաղաք ինքնայոժար անձնատուր եղած են իրեն:

Կերևի թէ Մինուասը հիւսիսային արևելք ևս տարածեր է իւր արշաւանքը, վասն զի Աէստների Արասիս գետոյ աջ ափի վերայ Արմաւիր քաղաքի հանդէպ օրինակած արձանագրութեան մէջ ևս յիշատակութիւն կայ Խապոյնիսի Մինուաս որդւոյ անուան մասին, թէ և այդ արձանագրութիւնը շատ աղաւաղեալ և կցկրտուր է: Բայց և հաւանական է որ այդ կալուածքը դարձեալ կորուսուած լինի, վասն զի նորա որդին և յաջորդը մեծ և ծանր պատերազմներ ունէր Աւանայ ծովի և Արասիսայ ընդարձակ միջնավայրում:

Ուրիշ արշաւանք մի ևս տրեր է Մինուաս արևելեան հարաւակողմում Վուրդաց Վիսաֆան անուն պետի դէմ. այս անունը Վերականական ստուգաբանութեամբ Յունաց Վիոգինէս անուան է համապատասխանում. զոր կարող եմք Մարաց Վեյաֆէ անուան հետ ևս համեմատել. այս իշխանի ձեռքն ընկաւ Վիաւիգանի Ուտիբուրսինի որդին: Բայց կերևի որ վերջը Վիաւիգան դարձեալ թշնամացաւ Պիայիմային, որովհետև Մինուասի որդին և յաջորդը վերջը դարձեալ պատերազմ ունեցաւ նորա հետ:

Ի զուր կլինէր մեր այս անունները Հայ պատմագրութեանց մէջ որոնելը, որոց ամենահինը մեր թուականի չորրորդ դարուն է պատկանում. բայց նրանց այնուամենայնիւ երևում են: Մովսէս Խորենոսցին աւանդում է մեզ Հայոց թագաւորաց յետագայ անունները՝ ա. Պարոյր որդի Սկայորդւոյ, Բ. Հրաչեայ, Գ. Փառնաւազ: Ուրեմն Փառնաւազը ըստ կարգի թւոյ մեր Մինուասն է: Մեր գրութեան մէջ այդ բառերի պարզ նմանութիւնը նկատելի չէ, իսկ Հայոց բեեռաձեւ նշանադրոց մէջ զանազանութիւնը շատ աննշան է. և վանկը ուղղաձիգ և հորիզոնական բեւեռներով կգրուի, որոնք միմեանց կխաչուին. Բ վանկը ուղղաձիգ բեւեռով, իսկ աջ կողմը հորիզոնական բեւեռով կգրուի. ուրեմն բաւական է որ այսպիսի արձանագրութեան մէջ քարեալատակը փոքր ինչ ձեղքուի կամ իւրիք մի աննշան աղաւաղութիւն ստանայ, և յայն դէպս ահա Փառնաւազի տեղ Մինուաս կկարդացուի: Ում է յայտնի թէ արդեօք ինչ վտանգից և փորձութեանց է

ենթարկուեր պատմութեան նախկին խուղարկողը, որից Մովսէս Խորենացին տեղեկութիւններ է քաղեր կամ հաւաքեր: Վերջիշեալ փաստի վերայ հիմնուելով՝ Հրաչեան մեր արձանագրութեան մէջ յիշատակուած Խաչոյնիսն է. այս անունները թէ և իրար նման չեն, բայց ըստ Մովսիսի Խորենացւոյ Հրաչեայն իւր անունը հրաչեց աչերուն համար ստացաւ, ուրեմն հաւանական է որ իր կենաց առաջին օրը չստացաւ, այլ որոշեալ հասակ առնելէն ետքը տրուեցաւ նորան այս անունը, որ մականունն մի է ի հարկէ, ինչպէս Բարբարոսսա: Բարբարոսսա և Վրիդրիս նմանապէս իրար նման չեն, բայց ամենեցուն ևս յայանի է՝ որ այդ երկու անունները մի և նոյն թաղաւորին են պատկանում: Պա-


րոյրն մեր արձանագրութեան Բաղրիտուրըն է, այս տեղ նմանութիւն չկայ ի հարկէ, բայց հարկ չէ մոռնալ, որ Խորենացին Հայկական հնագոյն բեռնաձև արձանագրութիւնը քանդակող ճարտարապետից 1200 տարի յետոյ է գրեր իւր պատմութիւնը:

Հարկ կհամարիմ՝ յիշել նոյնպէս, որ Մինուաս անունը այսօր ևս յաճախ գործածութեան մէջ է ի Հայս:

Ուրիշ արձանագրութիւն մի ևս կայ, զոր Մինուասի կողակիցը կանգնել տուեց իւր ամուսնւոյ համար, երեւի թէ նորամահուանից յետոյ. այս արձանագրութեան մէջ իւր անունն ևս յիշատակուում է, որ է Տարրիա՝ այն է Տարրիայի դուստր:

(Նոր-Նուիէլ):

ՏԵՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ



ՀԱՆՈՒՄՈՒՄ ՈՒՆԻ Է ԶԵՐԴԵԿ: